

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Հայաստանի անկախութեան 12ամեակին առիթով շնորհաւորական ուղերձ մը յղեց Հայաստանի նախագահ Ռուպերտ Քոչարեանին:

«Հայաստանի ժողովուրդը յստակ ընտրութիւն կատարած է ժողովրդավարական եւ իրաւական պետութեան կառուցման ի նպաստ: Եւ ան այսօր իրաւունք ունի հպարտանալու այդ ուղղութեամբ արձանագրուած ձեռքբերումներով»:

Նշուած է Փութինի ուղերձին մէջ: Ռուսիոյ նախագահը միաժամանակ վստահութիւն յայտնեց, թէ Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ առկայ բազմակողմանի փոխշահաւէտ գործակցութիւնը կը ծառայէ հայ - ռուսական ռազմավարական համագործակցութեան եւ կովկասի կայունութեան ամրապնդման:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՈՎ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱՆՈՒՄԱՆ 12ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Երկիրներու եւ պետութիւններու անկախացման կամ Ազգային տօները առիթ են արարողակարգային եւ փառատօնային պարունակէն դուրս՝ վերլուծութիւն կատարելու նուաճուած ուղիին, այնտեղ երեւցած դժուարութիւններուն, այսօրուան իրավիճակին եւ գործունէութեան հետնակարգներուն մասին: Պահը թելադրական է՝ ազգային - քաղաքական պրիսմակէն դիտելու ներհասարակական, հայրենիքի անվտանգութեան եւ առ հասարակ համահայկական տարողութիւն ունեցող հիմնախնդիրներու իրավիճակային մերօրեայ հանգրուանը, կարենալ վերլուծելու համար իրադարձութիւններու պատճառականութիւնը, շարժառիթները, անոնց արտաքին հաւանական ազդեցութիւնները, բայց մասնաւորապէս՝ կանխատեսելու ազգային - քաղաքական մեր երթին հետնակարգները:

Արամ Մանուկեաններու կերտած անկախ պետականութեան այսօրուան փաստական շարունակութիւնը հանդիսացող վերանկախ հայրենիքը 12ամեայ քաղաքական կենսափորձ ունի արդէն, որ կը յատկանշուի առաւելաբար իր ձեռքբերումներով եւ նուաճումներով:

Հաստատուած չ'ենթադրել անշուշտ, որ հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան այս վերջին շրջանը կը բնութագրուի միայն ազգային-քաղաքական յարցողային դրսեւորումներով: Նորահաստատ անկախ պետականութեան առաջին իշխանաւորներու քաղաքական վարքագիծերը սուղ արժեքին մեր ժողովուրդին թէ՛ հայրենաբնակ եւ թէ՛ արտասահմանեան համրանքներուն: Երկրին բարձրագոյն դիրքին ղեկավարուած ազգային այս քաղաքականութիւնը սակայն ի վերջոյ չկրցաւ ստուեր ձգել մեր նորանկախ հայրենիքի պետական համահայկական քաղաքականութեան, բանակի ինքնահաստատման, Արցախեան ազատամարտին, Հայկական Յեղափոխութեան ճանաչման պահանջատիրութեան պետականացման, Հայրենիք - Սփիւռք յարաբերութիւններու համակարգի մշակման պատմակերտ գործընթացներուն վրայ:

Յետ անկախացման ժամանակահատուածին, իրաքանչիւր ճակատագրորոշ պահու երբ բացակայեցաւ համահայկական մտածողութիւնը եւ տիրեց նեղ հատուածականը, հարուած ստացաւ մեր պետականութեան ամրակայման ընթացքը: Երբ ներազգային հարթակի վրայ իրարդրութիւնները յատկանշուեցան իշխանութիւնը ամէն գնով պահելու կամ ամէն գնով ձեռք ձգելու քաղաքական մարմաններով, տուժեց ժողովուրդը: Իսկ երբ տիրեց համահայկական մտածողութիւնը, յարցողեցան առաջադրանքները, կերտուեցան անկախութիւններու ու պետութիւնները, հյօրացան պիւնտրական միաւորումները, անխափան մնաց հայրենիքի անվտանգութիւնը:

Օրուան խորհուրդն ու անոր թելադրականութիւնը մտածել կու տան, որ ազգային - քաղաքական մեր ուղեգիծը պէտք է բացարձակօրէն խարսխել համահայկական մտածողութեան գաղափարախօսական արժեքներուն հիման վրայ: Հայաստան - Սփիւռք համազուտարեւելի թէ՛ Համահայկական խաղերու կազմակերպումը միայն կը սատարեն գաղափարական այս առաջադրանքին իրագործմանը: Դրական այս երեւոյթներու յարցող ու գործնական դրսեւորումներն են, որոնք կեանքի կը կոչեն համահայկական մտածողութեան դաւանած գաղափարական արժեքները:

Համահայկական գաղափարներու արժեքային համակարգի ձգողումն ու անոր ներշնչած ազգային - քաղաքական վարքագիծերու բանաձեւումները պէտք է նախագծեն Հայկական Յեղափոխութեան ճանաչման պահանջատիրութեան համահայկական ռազմավարութեան, Հայաստան - Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացման խնդիրին, Արցախի իրողական անկախութեան իրականացման ճանաչման հարցին, Արեւմտահայաստանի պահանջատիրութեան եւ նման համահայկական հանգամանք բովանդակող հիմնախնդիրներու ընդհանուր հայեցակարգերը:

Այս մեկնակէտով պէտք է բացատրել որեւէ ներազգային հակասութիւն Յեղափոխութեան ճանաչման պահանջատիրութեան հարցին, Արցախեան խնդիրին կարգաւորման թէ՛ ընդհանրապէս հայ - թուրք հաշտութեան կամ յարաբերութիւններու բնականոնացման նկատմամբ գոյութիւն ունեցող պատկերացումներուն միջեւ: Կանխելու համար՝ մշակութիւն փոխ նախարարի թուրքերուն հետ մեր ունեցած անցեալը մոռնալու անհեթեթ յայտարարութիւնները կամ Թուրքիոյ հետ սահմանը բանալու հարցին վերաբերեալ ներպետական հակասութիւնները:

12ամեայ կենսափորձը կը համոզէ բոլորս, որ համահայկական ներուժի օգտագործումով եւ անոր ճիշդ համակարգումով, մեր պետականութիւնը, գործակցաբար հայութիւնը բաղկացնող բոլոր տարրերուն հետ, կը յաջողի կատարելութեան հասցնել ժողովրդավար հասարակարգի ստեղծումի աշխատանքը, արդիւնքներ ձեռք ձգել հակակոռուպցիա պայքարին մէջ, հայ տնտեսութիւնը ազդեցիկ ներդրումային քաղաքականութեան ապահովումով՝ ի վերջոյ արժանապատիւ կենցաղ ապահովել հայրենիքի անկախ պետութեան ամրապնդման աշխատանքին, շարունակել՝ անվտանգ պահել մեր հայրենիքը եւ ազգային գաղափարախօսութեան դաւանած արժեքային համակարգին վրայ խարսխուած պահել հայ ժողովուրդի պահանջատիրութեան համազգային երթը:

Հ. Յ. Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԻՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ԸՆԿ. ԱՐՄԵՆ ՌՈՒՍԱՍՏԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ
Հ. Յ. Գ. «ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՇՈՒՄՆԵՐՈՎ» ՀԱՄԱԿԻՆ
ԷՁ 5

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԺԱՆԱԲՈՐԱՊԵՍ ՆՇԵՑ ԻՐ ՎԵՐԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 12ԱՄԵԱԿԸ

Հայաստանի մէջ երէկ պաշտօնապէս նշուեցաւ Հայաստանի վերանկախութեան 12րդ տարեդարձը: 1991 Սեպտեմբեր 21ին Հայաստանի քաղաքացիները գրեթէ միաձայնութեամբ «Այո» քուէարկեցին Հայաստանի անկախ եւ ժողովրդավարական պետութեան հռչակման հանրաքուէին:

Անկախութեան տօնակատարութիւնները սկսան Եռաբլուր այցելութեամբ: Հայաստանի նախագահ Ռուպերտ Քոչարեան, վարչապետ Անդրանիկ Մարգարեան, նախարարներ եւ քաղաքական թէ՛ զինուորական բարձրաստիճան այլ պաշտօնատարներ երէկ առաւօտ այցելեցին Եռաբլուր, ուր յարգանքի տուրք մատուցեցին Հայաստանի անկախութեան եւ Լեւոնային Ղարաբաղի ազատագրական պայքարի ընթացքին նահատակուած ազգային գործիչներուն եւ ազատամարտիկներուն յիշատակին եւ ծաղիկեպսակ զետեղեցին անոնց շիրմներուն:

Անկախութեան առիթով հրապարակած իր ուղերձին մէջ, նախագահ Քոչարեան անդրադարձաւ անցնող տարուան կարեւորագոյն իրադարձութիւններուն: Ան նշեց, որ Հայաստանի նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններին ետք կազմուած քաղաքական համաձայնական դաշինքը, ինչպէս նաեւ երկրին

նախագահը եւ խորհրդարանը կոչուած են իրականացրելու ժողովուրդին անկախութիւնները, յատկապէս ընկերային-տնտեսական բնագաւառներէն ներս:

Նախագահ Քոչարեան նաեւ անդրադարձաւ կառավարութեան տնտեսական ծրագրին, ինչպէս նաեւ ազգային բանակի կարեւոր դերին: Ան նաեւ անդրադարձաւ Հայաստանի արտաքին քաղաքականութեան եւ նշեց, որ Հարաւային կովկասի մէջ Հայաստանի վարած քաղաքականութիւնը կը միտի կայունութեան պահպանման ու համագործակցութեան: Ընդգծելով, որ Հայաստան հետամուտ է Լեւոնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման, նախագահ Քոչարեան նկատել տուաւ, որ Արցախի ժողովուրդը կը կառուցէ իր պետականութիւնը, իսկ Հայաստան այդ մէջ կը նկատէ արդար եւ անփոխարինելի իրաւունք:

Պաշտօնական հանդիսութիւններուն կողքին Հայաստանի տարբեր շրջաններու մէջ երէկ տեղի ունեցան ժողովրդային բազմաթիւ ձեռնարկներ:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ անկախութեան 12ամեակին առիթով նախագահ Ռուպերտ Քոչարեան տարբեր շրջաններով պարգեւատրեց Հայաստանի բանակի զինուորականներ եւ անկախութեան կերտման մէջ դերակատար ազգային գործիչներ:

ԲՐԻՏԱՆԻՈՅ, ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԿՈՉ ՈՒՂ ՂԵՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱԳ ՓՈՒՍԱՆՑՄԱՆ

Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Գերմանիոյ ղեկավարները կոչ ուղղեցին իշխանութեան արագ փոխանցման իրաքի մէջ, ինչպէս նաեւ ՄԱԿի բանալի դերակատարութեան: Երեք ղեկավարները, որոնք վեհաժողով մը գումարեցին Պերլինի մէջ, չյաջողեցան սակայն լուծել իրենց տարակարծութիւնները եւ ըստ մեկնաբաններու, ինչպէս նաեւ բրիտանական մամուլին՝ վեհաժողովը ձախողութիւն մըն էր վարչապետ Թոնի Պլեյրի համար:

Եռակողմանի հանդիպումին նպատակն էր դարձանել Եւրոպայի դիւանագիտական վէճերը (Իրաքի պատերազմին պատճառով) եւ միացեալ կեցուածք մը որդեգրել իրաքի կայունացման միջոցներուն հանդէպ: Երեք ղեկավարները թէ՛ եւ ընդհանուր գիծերու մէջ համաձայնութիւն գոյացուցին, բայց եւս այսպէս անոնք տարակարծ մնացին իշխանութիւնը իրաքցիներուն յանձնելու գործընթացին արագութեան մասին:

Պլեյր ըսաւ, որ բոլորին համար նպատակաւոր է, որ իշխանութիւնը շուտով փոխանցուի իրաքեան քաղաքային կառավարութեան մը: Ան աւելցուց, որ այս ուղղութեամբ տարակարծութիւնները կարելի է լուծել: Իր իսուքին մէջ Պլեյր փորձեց նսեմացնել տարակարծութիւններու տարողութիւնը, սակայն Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրեյտըր եւ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաք չեղեցին այդ տարակարծութիւնները: Շիրաք ըսաւ, որ թէ՛ եւ Լոնտոն, Փարիզ եւ Պերլին հասարակաց մտեցում մը ունին իրաքի հարցին հանդէպ, բայց եւս այսպէս Գերմանիոյ եւ Ֆրանսայի մտահոգութիւնները տակաւին բոլորովին չեն փարատած եւ կա-



րիքը ունին քննարկման ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կողմէ: Շիրաք աւելցուց, որ հիմնական տարակարծութիւնը կ'առնչուի իշխանութեան փոխանցման ձեւին ու ժամանակացոյցին: Ան վերստին շեշտեց, որ փոխանցումը պէտք է տեղի ունենայ յառաջիկայ քանի մը ամսուան մէջ, մինչ Պլեյր եւ դաշնակից ամերիկացիները չեն ուզեր հաստատ ժամանակամիջոց մը ունենալ:

Շրեյտըր իր կարգին ըսաւ, որ իշխանութեան փոխանցման հարցը պէտք է քննարկուի: Բրիտանական մամուլը պաղ ջուր թափեց Պլեյրի Գերմանիոյ եւ Ֆրանսայի հետ կապերը բարելաւելու ճիգերուն վրայ, յայտարարելով, որ Պերլինի վեհաժողովը ձախողութիւն էր: Բրիտանական օրաթերթերը կը գրէին, թէ Պլեյր ձեռնուեցաւ վերադարձաւ Պերլինէն, ուր չյաջողեցաւ ապահովել Շրեյտըրի եւ Շիրաքի գորակցութիւնը:

ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ ԿԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԻ ՀԱՄԱՍԻ ՀԱՇՈՒՆԵՐՈՎ

Կեդրոնական Դրամատան «Գրամ լուսալու» դէմ պայքարող յանձնախումբը դրամատուներուն ուղղորակած է շրջաբերականներ, անհանջելով Համաս շարժումի վեց ղեկավարներուն անհնով պահ դրուած գումարներու փաստաթուղթը, հաղորդեց «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը: Ղեկավարներուն մէջ են Համասի հոգեւոր պետ շէյխ Ահմէտ Եսաին, Ապտէլաբդի Բանիսիսի եւ Լիբանանի մէջ Համասի ներկայացուցիչ Ուսամ Համատան:

Շրջաբերականը կը պահանջէ նաեւ յստակացնել Կեդրոնական Դրամատան մէջ պահ դրուած պաղեւտինեան 5 այլ կազմակերպութիւններու գումարները: Կազմակերպութիւնները Ուաշինկթընի կողմէ ամբաստանուած են Համասի ներկայական օժանդակութիւններ կատարելու յանցանքով:

Առաջին անգամն է, որ Կեդրոնական Դրամատանը կը պահանջէ Համասի հաշիւները:

ՄԻՋԱԴԷՊ ԻԲԼԻՄ ԹՈՒՖԱՀԻ ՄԷՋ

Բանակի հրամանատարութիւնը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, որ Իբլիմ Թուֆահի ժրպատ գիւղաքաղաքին մէջ յետ վիճաբանութեան մը տեղի ունեցած է բախումներ:

Կացութիւնը հակակիւրի տակ առնելու նպատակով միջոցառած է լիբանանեան բանակը: Սպանուած է Ահմէտ Ղայլուօ անուանով քաղաքացի մը, իսկ ուրիշ մը վիրաւորուած է:

● ԻՍՐԱԵԼԵԱՆ օդուժը երէկ երեկոյեան ժամը 6:30ին թռիչքներ կատարեց հարաւային Լիբանանի Պրոնթ ժայլ գիւղաքաղաքին վերեւ, ըստ բանակի հրամանատարութեան հրապարակած հաղորդագրութեան:

ԵՐԵՎԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ ԿԵՐԱՊԱՑՈՒՄ

Երէկ տեղի ունեցաւ Երեւանի կեդրոնական վերանորոգուած հրապարակին (Հանրապետութիւն) բացումը:

Բացման արարողութեան ներկայ էին Հայաստանի նախագահ Ռուպերտ Քոչարեան, նախագահի աշխատակազմի ղեկավար, «Լիւսի» ծրագրի համակարգող Արտաշէս Թումանեան, Երեւանի քաղաքապետ Երուանդ Չախարեան, նախարարներ եւ բարձրաստիճան այլ անձնատիրութիւններ:

Հրապարակին վերանորոգութիւնը սկսած էր անցնող զարնան, «Լիւսի» հիմնարկին ֆինանսատրուտով: Անիկա արժած է շուրջ 1.6 միլիոն տոլար:

ԼԱԹՎԻԱՑԻՔ «ԱՅՈ» ԳՈՒԷԱՐԿԵՑԻՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ

ՌԻԿԱ, 21 (ԱՅՓ) — Նախկին խորհրդային հանրապետութիւններէն՝ Լատվիոյ քուէարկողներուն 87 առ հազարը «Այո» ըսաւ Եւրոպայի Միութեան անդամակցելու հանրաքուէին, որ կայացաւ Շաբաթ օր: Քուէարկողներուն 32,3 առ հազարը դէմ քուէարկեց:

Լատվիոյ նախագահ Վայրա Վայքե Ֆրայպերկով, որ պատմութեան նոր հանգրուան մը կը թեւակոխէ երկրորդը: Ան աւելցուց, որ Լատվիոյ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով լատվիացիները ազատութիւնը ունեցան որոշելու, թէ ո՞ր ուղղութեամբ կ'ուզեն տանել երկիրը:

Ե. Միութեան բարձրաստիճան պաշտօնատարներ ողջունեցին Լատվիոյ հանրաքուէին արդիւնքը:

www.mesrobian.com

Արամյան Գրքատուն

Հեռ. 01-349816, Պէլլորթ

260504

NEW

COOKING

Ցերեկյան Կապոնիստ

Վարմաս խոհարար

Արդիական խոհանոց

HAIR STYLING

MAKE UP

JEWELRY Design

DIAMOND Setting

WAX Holding

GEMOLOGY

TV - Video & Radio Repair

Car Electricity & Electronics

COMPUTER + INTERNET

25,000 LP/month

COMPUTER Hardware

NEW

MCSE - CISCO

Java - Flash - Linux + E-COMMERCE

Adobe - Oracle 9i ...

PROFESSIONAL IT TRAINING

MESROBIAN TECHNICAL COLLEGE

Երբեք ուշ չէ ուսանելու համար

TICKETING IATA

English + 8 osur Լեզուներ

NEW

ACCOUNTING

50,000 LP/month

B.T.

100,000 LP/month

LCCIEB

Business Առևտրային կապակցություններ

ՀԱՅ ԱՒԵՏ. ՔՈՒԼԵՃ

Հիմնում 1923ին, Մեքսիկա փողոց (Հեռ. 01-349816, Պէլլորթ)

- 1.- Նորեկ աշակերտներու դիմումները կը շարունակենք ընդունել Սեպտեմբերի ընթացքին ամէն օր Երկուշաբթիէն Ուրբաթ կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:30:
- 2.- 2003-2004 թվականի արձանագրութիւնները մանկապարտէզի, նախակրթարանի եւ երկրորդական բաժնի համար տեղի կ'ունենան Հինգշաբթի, 29 Սեպտեմբեր եւ Ուրբաթ, 30 Սեպտեմբեր 2003, կէսօրէ առաջ ժամը 8:30էն 12:30:
- Պարաօրէն (12րդ) դասարանի լրացուցիչ արձանագրութիւնները Սեպտեմբեր 9էն 12ին են:
- Նախնական արձանագրութիւն կատարած նախկին աշակերտները պարտին վերահաստատել իրենց արձանագրութիւնը:
- 3.- Հոգաբարձութեան կարգադրութեամբ օրու պիւսի սպասարկութիւն պիտի ունենանք բոլոր շրջաններուն համար:
- 4.- Բոլոր արձանագրողներէն, նախկին թէնոր, կը պահանջուի միասին բերել երկու փոքր լուսանկարներ:
- 5.- Նախնական արձանագրութիւն չըրած նորեկ աշակերտներ պարտին բերել յաճախած վերջին դպրոցի վիճակագրոց, բարի վարուց վկայագիր, ինքնուրուի թուղթի ֆոթոքրոֆին եւ կրթական նախարարութեան մօտ իրենց վաւերացուած թիւը:
- 6.- Վերաքննութիւնները տեղի կ'ունենան Հետեւեալ կարգով. առաւօտեան ժամը 9:00էն սկսեալ, Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր (յեզուական նիւթեր) եւ Ուրբաթ, 26 Սեպտեմբեր (թուրքական նիւթեր) եւ գիտական նիւթեր):
- 11րդ դասարանի վերաքննութիւններն ու դէպի 12րդ դասարան մուտքի քննութիւնները Չորեքշաբթի 11 եւ Հինգշաբթի 12 Սեպտեմբերին են:
- 7.- Չորեքշաբթի, 1 Հոկտեմբեր առաւօտեան ժամը 7:40ին դասաւանդութիւնները կը սկսին:
- 12րդ դասարանի դասերը կը սկսին Երկուշաբթի, 15 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 8:00ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

Համազգային Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի 2003-2004 տարեշրջանի հին թէ նոր ուսանողներու արձանագրութիւնները կը շարունակուին առաւօտեան ժամը 10:00էն 1:00, Ծաղկաձորի Սելանթրոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանի մեր գրասենեակներէն ներս:

Հետաքրքրուողներ կրնան անձամբ դիմել գրասենեակ, եւ կամ կապուիլ՝

Հեռաձայն՝ 04-712603
04-712604
03-429685

Fax: 04-712601
E-mail: djemaran@inco.com.lb
Մուտքի քննութիւնները՝ 1-3 Հոկտեմբեր 2003ին:
Վերամուտ՝ 6 Հոկտեմբեր 2003ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ ԱՄԷՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԼՍԵՅԷՔ «ՏԵՍԱԿԵՏ» ՅԱՅՏԱԳԻՐԸ

Երեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին,

«ՏԵՍԱԿԵՏ»

յայտագիրին նիւթն է՝

«ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ»

Կը խօսիմ՝

ՇԱՀԱՆԴՈՒՆՏ ԳԵՂԱՆԻ ԷԹԻԵՄԷՉԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցէք «Վանայ Զայն»՝ 01-241199 եւ 01-267657 թիւերուն, ու տուէք ձեր կարծիքը:

ՄԵԹՐ ԱՒԵՏԻՍ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

(Փաստաբան՝ Միացեալ Նահանգներէն)

Յարգոյ յաճախողներուն կը տեղեկացնէ, թէ 20 Սեպտեմբերէն 6 Հոկտեմբեր 2003 պիտի գտնուի Լիբանան եւ որեւէ դատական, առեւտրական հարցերու խորհրդակցութեան համար պիտի ընդունի զիրենք ամէն օր հետեւեալ հասցէին:

Օրոստրատ ժողով, YARA Center, «Ալմա-գա»ի դիմաց, Ա. յարկ, հեռ. 01-877740 եւ 03-273266:

«ԱՂԹԱՄԱՐ»

ՏՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Չեր ձեռնարկի պաշարին համար պահանջեցէ՛ք ԼՕՍԻ «Աղթամար» պահածոները, պատրաստուած առանց քիմիական նիւթերու եւ արեւու բնական ջերմութեամբ, ծիրանի, թուզի, վայրի կեռասի, նարինջի, դդումի եւ սերկեւիլի անուշներ, կարմիր պղպեղի փոշի եւ խիւս, անանուխի փոշի, թրուշներ, լուկի պահածոներ, եւ այլն:

Փնտրեցէ՛ք բոլոր supermarketներուն մէջ, համեմատաբար մօտ, ինչպէս նաեւ նորաբաց Auxilia Coopers մէջ, Անթիլիաս եւ միւս մասնաձիւղերը, եւ ԼՕՍԻ «Արաքսի Պուլկուրճեան» ընկերութեան կեդրոն 4րդ յարկ:

Այս վաճառքէն զոյգացած գուճարները կը ծառայեն ԼՕՍԻ կրթական՝ ընկերային եւ առողջապահական նպատակներուն:

Հեռ. 01/242898 եւ 01/265359:

ԼՕՍԻ ԶՐԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Շաբաթ, 20 Սեպտեմբերին լոյս տեսած իբրանական օրաթերթերը իրենց հրապարակած լրատուութիւններով, յօդուածներով եւ վերլուծական ակնարկութիւններով գիւտարար շէշուր դրած էին աներկեան Բունկրէսին մէջ կատարած գործի Միշէլ Աուսի յայտարարութիւններուն դէմ շրջապատեցող արշաւին վրայ: Թերթերը նաեւ անդրադարձած էին իբրանական քաղաքական կեանքը յուլոյդ այլ հարցերու, ինչպէս՝ քիշայի հեռաձայնի հարցը եւ «Մատինա» դրամատան թղթածրարը:

Լիբանանեան մամուլին ուշադրութեան կեդրոնը կը կապուին նաեւ Իրաքի պաշտպանութեան նախկին նախարար Սուլթան Հաշէմ Ահմէտի անձնատուութիւնը ամերիկեան բռնագրաւող ուժերուն, Արաքսի վտարման իրադրեան որոշումին դէմ ՄԱԿի Ընդհանուր Ժողովին տուած մէկ որոշումը, Ռաշիդընի շարունակուող ճնշումները Սուրիոյ եւ Իրանի նկատմամբ եւ այլն:

ԱՏՏՈՒ. ԱՌԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԶԱՅՈՐԱՐԸ ՏԱԿԱԻՆ ԲԱՅ Է

Շաբաթ օր լոյս տեսած «Տիար» օրաթերթին հիմնական մանչէթը եւ գիւտարար լուրերը հրատարակուած էին թերթի 15րդ էջին վրայ, որովհետեւ առաջին էջը գրեթէ ամբողջութեամբ տրուած էր թերթի խմբագրապետ Շարլ Էյուպի ստորագրութիւնը կրող «Չոր. Աուսին...» խորագրեալ բաց նամակը, որով Էյուպ կը միանար գործի Միշէլ Աուսի վերջին յայտարարութիւններուն դէմ երկրին մէջ տարածուած դատապարտումի այլիքին:

Այս անշուքեան թերթը իր հիմնական լրատուութեան մէջ կ'արձանագրէ, թէ Աուսի դէմ իսկապէս գործողները կը շարունակուին՝ դատապարտելով Միացեալ Նահանգներու պետական յոյսին ծրագիրները: Իր կարգին, մարտիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքը յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներու վրայ գրաւ դնելը երբեք ընդունելի չէ:

Ըստ «Մաֆի» օրաթերթին, Աուսի հակասուրիական կեցուածքները դատապարտող նոր կեցուածքներ կ'արձանագրուին, իսկ ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուն անոր կը յիշեցնէ իր դատական թղթածրարները:

«Նահար» օրաթերթը կը նշէ, որ Աուսի դէմ դատապարտումի արշաւը կը շարունակուի: Ատտուն կը կրկնէ, թէ Աուսի դատական թղթածրարը տակաւին բաց կը մնայ, իսկ վերջինս կը պատասխանէ. «Սուրիոյ դէմ թշնամանք չենք տածեր, սակայն միեւնոյն ժամանակ մեր իրաւունքները պիտի չմուրանք անկէ»:

«Անուար» իր կարգին անդրադարձած է իբրանական քաղաքական կեանքը յուլոյդ թղթածրարներուն: Ըստ թերթին, իբրանական կառավարութեան վերջին մտահոգութիւնը կը կայանայ երկու ամիս ետք տեղի ունենալիք քիշայի հեռաձայնի աճուրդի եւ նուազորդի մրցանքին մէջ: Ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուն «Մատինա» դրամատան տագնապին շուրջ դատական աշխատանքին գծով կը բացայայտէ որոշ արդիւնքներու գոյութիւն ունենալը:

ԱՏԵՐԻԿԱՅԻ ԸՄԲԱՏԱՐԻՍ ԻՐԱԵԱՆ ԶԻՆԵԱԼ ՆՍՐԱԿՆԵՐ

«Մաֆի» օրաթերթը կը հաղորդէ, թէ ամերիկեան բռնագրաւումի ուժերուն Իրաքի մէջ ապրած ապահովական տագնապին հարցը լուծելու համար, Միացեալ Նահանգներու կողմնակից իրաքցի հինգ հրանաւատներ յայտնեցին, թէ կը կապուին Ամերիկայի հաւատարմի պիւնտի խմբակներ՝ բռնագրաւումի ուժերուն փոխարէն պահովութեան հարցերով կրթելու համար: Այս պիւնտի խմբակները պիտի գտնուին Իրաքի ներքին գործոց նախարարութեան հսկողութեան տակ: Մինչ այդ, Ռաշիդընի կը շարունակէ իր քննադատութիւնները եւ միջամտութիւնները Սուրիոյ եւ Իրանի դէմ:

«Տիար» օրաթերթը նշած է, թէ Իրաքի պաշտպանութեան նախկին նախարար Սուլթան Հաշէմ Ահմէտ յանձնուած է ամերիկեան բռնագրաւող ուժերուն: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաութը կը խոստովանի, որ կացութիւնը վտանգաւոր է Իրաքի մէջ, իսկ Իրաքի ամերիկացի քաղաքային կառավարիչ Փոլ Պրեմըր այս կացութեան համար կ'անբաստանէ Սուրիան եւ Իրանը:

«Անուար» շարունակելով անդրադառնալ իրաքեան ընդդիմութեան ամէսօրեայ գործողութիւններուն, կը հաղորդէ, թէ պայթում մը ցնցած է մայրաքաղաք Պաղատը, իսկ նախկին նախագահ Սատան Վիսէյի ծննդավայր Թիքրիթի մէջ տեղի ունեցած գործողութեան մը իբրեւ արդիւնք սպաննուած է ամերիկացի 4 պիւնտըր:

«Նահար» հարց կու տայ, թէ Իրաքի պաշտպանութեան նախկին նախարարին անձնատուութիւնը արդեօք պիտի առաջնորդէ՞ Սատանին եւ Կանգուածային կործանման կէսերու տեղծուածին բացայայտումին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Լիբանանի Երջանային Վարչութիւն

HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿ

ARAM KHATCHADOURIAN 100th ANNIVERSARY

Under The Patronage of H.E. MR. GHAZZI AL ARIDI, Minister of Culture

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամպլ

Գեղարուեստական Ղեկավար՝ Մովսէս Խորենացիի Անուան Շէֆանշանակիր՝ ՆՈՐԱՅՐ ՄԵՐԱԲԻԱՆ

THURSDAY 2 OCTOBER
SATURDAY 4 OCTOBER
2003
AT 8:30 PM IN UNESCO PALACE

Tickets on Sale: **Virgin** Down Town BoxOffice BHV Jnah Hamazkayin Library Discotheque Geka Studio Vatche Library Obelix Antelias

PARAGAMUTYUN

State Dance Troupe of Armenia
Artistic Director - Honoured Artist of Armenia
NORAYR MEHRABIAN

Cigaronne

ARZNI SPARKLING MINERAL NATURAL WATER

ՍԱԿ՝ Ի ՆՊԱՍ ԱՐԱՖԱԹ

Ըստ «Մաֆի» օրաթերթին, 133 թեր, 4 դէմ (որոնց շարքին Իրաքի եւ Միացեալ Նահանգներ) ձայներու համեմատութեամբ ՄԱԿի Ընդհանուր Ժողովը որոշած է պաշտպանել Արաքսի վայր վտարելու իրադրեան որոշումին:

«Նահար» կը նշէ, որ ՄԱԿի Ընդհանուր Ժողովը որոշում կու տայ Արաքսի արտաքսման որոշումին դէմ, որոշումին ընդդիմացաւ Ռաշիդընի, իսկ անոր նկատմամբ դրամատան համակարծիք էին երոպական երկիրները:

«Անուար» կը հաղորդէ, թէ Այսրոդանանի մէջ տեղի ունեցած բախումի մը ընթացքին վիրատուած են իրաքցիացի 3 պիւնտըրներ: Թերթը կ'աւելցնէ, որ 133 երկիրներ Իրաքի մէջ պահանջեցին յետս կոչել Արաքսի վնաս հասցնելու կամ վայր արտաքսելու սպանալիքը:

Իր կարգին, «Տիար» օրաթերթը կը նշէ, թէ Արաքսի մասին Միացեալ Նահանգներու նախարար Ջորջ Պուշի իւրեքին գծով գոհունակութիւն արտայայտելու ետք, Իրաքի կը փորձէ Ռաշիդընի կամուրջը «հրէական» եւ պաղեստինեան շրջանները իրարմէ անջատող ցանկապատը կառուցելու շարունակման գծով: Պաղեստինեան իշխանութիւններու նոր նշանակում վարչապետ Ահմէտ Քորէյ կը շարունակէ իր խորհրդակցութիւնները՝ պաղեստինեան նոր կառավարութիւնը կապուելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՆԱՑՄԱՆ 12 ԱՄԵԱԿ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԶՕՐ ՍՓԻՌՔ ԵՒ ԱՆԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Սփիւռքը Հայաստանի Հանրապետության վերանկախացման երկար տարիներ սպասեց եւ իրերաշարժող սերունդներ այդ իտեալով ապրեցան ու այդ գաղափարին նուիրաբերեցին իրենց հնարարութեամբ միջոցները:

Այսօր արդեն այդ իտեալը իրականութիւն է: Սակայն այդ իրականութիւնը իր թելադրանքը ունի: Սփիւռքը այնուհետ հայրենագուրկ հաւաքականութիւն չէ, իսկ Հայաստանը խորհրդային վիճակէն դուրս եկած հանրապետութիւն է:

Նոր կացութեան ի պատասխան շրջանառութեան մէջ մտաւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութեան մտածողութիւնը մը, որ ինչքան ալ գործնական խնդիրներու լուծումներ գտնելու միտում ունեցող հասկացողութիւն է, բայց ըստ էութեան այնքան ալ առողջ հնչեցողութիւն չունի: Որովհետեւ, «յարաբերութիւն» հասկացողութիւնը ինքնին երկու տարբեր օղակներու փոխադարձ ներազդեցութիւն կ'ենթադրէ, ինչ որ զգալի ձեւով կը տկարացնէ բոլորիս կողմէ ընդունուած «Մէկ ազգ մէկ հայրենիք» սկզբունքը:

Խորքին մէջ հարցը չի կայանար Սփիւռքը Հայրենիքին հետ կամ Հայրենիքը Սփիւռքին յարաբերելուն մէջ, այլ հիմնական հարցը էր եւ կը շարունակէ մնալ իրբեւ մէկ ու միասնական հաւաքականութիւն գործելը:

Հայաստանի վերանկախացումէն ետք Սփիւռքը պարտաւոր է մտածելակերպային եւ գործելաձեւային ձեւափոխութիւն ապրիլ: Այս հաստատումը բացարձակապէս չի նշանակեր կայացած դրուածքը քանդել եւ գործնական հմտութիւն, այլ պարզապէս Հայրենիքի վերանկախացման փաստը նկատի առնելու իմաստով իր տեղը պետք է ունենայ սփիւռքահայ կեանքի բոլոր մակարդակներու վրայ, եւ չափազանցած չենք ըլլար երբ պնդեցին, որ այդ մէկը նոյնիսկ ընտանեկան ու մեր գաւազներու դաստիարակութեան մակարդակի վրայ իր արժանի ներազդեցութիւնը պետք է ունենայ: Սփիւռքը ոչ թէ վերանկախացած Հայրենիքի հետ յարաբերուած ձեւափոխութեան հարց յարուց պիտի բաշտէ, այլ անկախ Հայրենիք ունեցողի մտածողութիւն պետք է ձեւաւորէ:

Իսկ վերանկախացած Հայաստանը առաւել եւս Սփիւռքի հետ յարաբերելու խնդիր չի կրնար ունենալ, եթէ ընդունած ենք բոլորս որ այն պիտի ըլլայ ողջ հայութեան հայրենիքը: Հայաստանը պարզապէս իր պետական ու ժողովրդային մակարդակներով Սփիւռք ունեցող, պատմական իրադարձութիւններու բերումով իր սահմաններէն դուրս ապրող ու պատմական ոտնակոխուած իրաւունքներ հետապնդող հաւաքականութեան տիրութիւն ընդ պետականութեան մը մշակոյթ պիտի գարացնէ: Այս մշակոյթը պետք է երեւի Հայաստանի օրէնսդրական ամբողջ համակարգին եւ մշակուած ու գործադրուած ողջ քաղաքականութեան մէջ:

Վերնոշեալ փոխադարձ պարտաւորութիւններ կրելու անհրաժեշտութիւնը նշելով ըսել չենք ուզեր, որ անոնք այսօր ի սպառ բացակայ են: Յանուն արդարութեան, պետք է նշել, որ այդ պարտաւորութիւնները կրելու նշանակաւոր տեղատեղ նկատուի են: Սակայն, յանուն նոյն արդարութեան, պետք է ընդգծել, որ Հայաստանն ու Սփիւռքը իրենց պարտաւորութիւնները կրելու իմաստով դեռ չեն գտնուիր պահանջուած մակարդակի վրայ եւ այդ ուղղութեամբ ընելիքներ ունին երկուստեք, որպէսզի Սփիւռքը հզօր յենարան դառնայ վերանկախացած Հայաստանին, եւ Հայաստանը՝ ապահով հովանի Սփիւռքին:

«ՀԱՅՐԵՆԻՔ»

ԱՐԳԱՐ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Հայաստան եւ հայ ժողովուրդը երէկ նշեցին Հայաստանի անկախութեան 12րդ տարեդարձը: Յատկապէս այս առիթը կը ծառայէ յետադարձ ակնարկով մը ընդհանուր հաշուեկէշի: Թերութիւններու սրբազրուումով, յաջողութիւններու արժեւորումով, երթը շարունակելու ունենալով իրբեւ հեռանկար: Այսուհանդերձ պիտի փորձենք արագ ակնարկով մը անդրադառնալ Հայաստանի անցնող տարուան՝ անկախութեան 12րդ տարուան քանի մը կարեւորագոյն իրադարձութիւններուն:

Նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններու քաղաքական տենդով յատկանշեցաւ անցնող տարին: Օրին տարբեր ընտրիչ եւ ըզմանակութեան՝ յաճախ հակադիր եւ քաղաքական խորք ունեցող միջազգային թէ՛ տեղական մեկնարանութիւններ տրուեցան ընտրական համընդհանուր գործընթացին, որ յատկանշեցաւ ակնարկի խախտումներով եւ թերութիւններով: Այս առումով, ժողովրդավարութեան հիմնական առաջնութիւնը նկատուող ընտրական այս մարտնչուող դժուար թէ՛ դէպի առաջ քալլ մը նկատուի Հայաստանի գարգացման ճանապարհին վրայ:

Ընտրութիւններուն առնչուող երկու այլ երեւոյթներ՝ անոնցմէ առաջ եւ ետք տեղի ունեցած սպանութիւնները եւ Սահմանադրութեան հանրաքուէի արդիւնքը կարեւոր ցուցանիշներ են Հայաստանի մէջ առկա գործընթացներուն եւ ժամանակակից կացութեան լուսարբանման համար: Արդարեւ, հասարակական կարեւոր դէմքի մը սպանութիւնը, ինչպէս նաեւ ընտրութիւններէն ետք տեղի ունեցած եւ հաշուեյարդարի ընդթիվ սպանութիւնները եւ միջազգային եկան վերահաստատելու, որ Հայաստան տակաւին ճամբայ ունի կտրելիք իրենք քաղաքակիրթ երկիր պարծենալու: Նոյնքան կարեւոր եւ խորհրդանշական է Սահմանադրութեան յարեփոխման հանրաքուէի ձախողութիւնը: Հատուկ է, որ ատիկա տեղի ունեցաւ ոչ այն պատճառով, որ առաջարկուած սահմանադրական բարեփոխումները ըստ էութեան ըրաբիփոխումներ չէին, այլ որովհետեւ ըրաբիփոխման նախադիր համապատասխան մարմիններուն եւ կառույցներուն կողմէ արժանաւորապէս ներկայացուցանուած եւ չբացատրուեցան հանրութեան, այլ խօսքով՝ ընտրական մրցավազքի թեկնածուներին մէջ «զոհաբերուեցաւ» ի շահ ընտրական պատեհապաշտ շահերու՝ այլ ցուցանիշ մը հայրենի քաղաքական վերնախաւի հոգեմեծ:

Անցնող տարուան ընթացքին հայրենի պետական արբերու կողմէ յաճախ արժանաւորուեցաւ եւ անմիջական հարցի հանգամանք ստացաւ Հայաստան - Թուրքիա սահմանի բացումը: Հոս եւս խորհրդակցութիւնը կը մնայ տիրական ներկայութիւն: Հարցին կը մտնեցուի զուտ տնտեսական դիտանկիւնէ, անտեսելով հայ-թուրք յարաբերութիւններու հիմնական խնդիրը՝ Հայկական Յեղափոխութեան ճանաչումը եւ հատուցումը: Ազգային այս զերինդիրին հետ թեթեւամտութիւն եւ սանձարձակութեան վարուելու տարողութիւնը կը հասնի հոն, որ հայ բարձրաստիճան պաշտօնատար մը այս օրերուն անցեալը մոռնալու, ներելու եւ բարեկամութիւն հաստատելու յորդորներ կը կարգալ Անթաթիլային: Դժբախտաբար, երբեմն կը ստանանք այն տպաւորութիւնը, թէ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգը նկատուող Հայկական Յեղափոխութեան ճանաչման ուղղութեամբ հայրենի քաղաքականութիւնը կը սահմանափակուի Հայաստան յայտնուող օտար պաշտօնատարները Ծիծեռնակաբերդ առաջնորդելով, թէ եւ հայրենի իշխանութիւնները կրկնօրէն նաեւ հնարաւորին չափ հարցը արժարձել միջազգային բեմերէն:

Երիտասարդ պետութիւն մը ըլլալով, Հայաստան կը դիմագրաւէ բազմաթիւ մարտահրաւէրներ (վերոնշեալները քանի մը օրինակ են միայն): Հայաստան եւ հայ ժողովուրդը կը գտնուին ազգային անվտանգութեան, տնտեսական եւ ընկերային առումով Հայաստանի պետականութեան ամբապնդման, Լեւոնայի շարժումի տագնապի հայանպատակ լուծման, Հայաստան-Սփիւռք կապերու ամրակայման հրամայականներուն դիմաց: Հրամայականներ, որոնց դիմակալումը կը կարօտի համազգային ճիշդ: Եւ վստահ ենք, որ իրբեւ մէկ ազգ, ի վերջոյ պիտի հարթենք վերոյիշեալ հարցերը, ի խնդիր հզօր հայրենիքի մը կերտումին:

L.A.

ԱՆԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԱՅՈՒԱԾՔՆԵՐՈՒՆ ՍԵՒՆՈՒԱԿԷՏԸ

21 Սեպտեմբեր 1991ին հայութիւնը իր միաբերան «Այո» ըսաւ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու գաղափարին: Անցած մը եւս ունեցանք անկախ հայրենիք՝ բռնատիրական եւ ամբողջատիրական վարչակարգի մը տանաձեւակցութեան տիրապետութեան ներքին: Այս իրողութիւնը աւելի եւս ամրապնդեց այն միտքը, թէ վարչակարգերը եւ ամէն տեսակի ո՛չ ժողովրդական իշխանութիւնը գնաճու են, մնաճու են ազգն ու հայրենիքը, ազգի դաւանած ազգային եւ մարդկային կարգն հիմնական սկզբունքներով՝ անկախութեան եւ ազատութեան տենչով:

Անկախ եւ ազատ հայրենիքը ժողովուրդի մը հոգեմտաւոր արժեքներուն պահպանման գլխաւոր գրաւականն է: Այդ հայրենիքին մէջն է, որ ազգային հաւաքականութիւն մը պիտի աշխատի, ստեղծագործէ եւ ստեղծէ իր ինքնուրոյն դիմագիծը՝ անկախ եւ ազատ միւս ժողովուրդներու ընտանիքին մէջ: Եւ հայութիւնը՝ իրբեւ ազգային հաւաքականութիւն մը, որ ունի իր իւրաքանչեւ դիմագիծը, չէր կրնար անտեսել անկախ պարտաւորութիւնները, իր դիմագիծը պահպանելու համար:

12 տարի անցած է արդէն Հայաստանի անկախութեան վերականգնումէն: 21 Սեպտեմբերի հաւաքական «այո»ն եկաւ վերաբեկուելու 28 Մայիս 1918ին արիւնով ձեռք ձգուած անկախութիւնը, որ աւելի քան 70 տարի քաղաքական իրաւունքներու իրաւունքներու իրաւունքներու տակ: Իր անկախութիւնը վերականգնելով, հայութիւնը եկաւ հաստատելու, որ ինք

տակաւին տէր կը կանգնի իր ազգային արժեքներուն, եւ մանաւանդ՝ ազգային գաղափարախօսութեան:

Հայութեան մէջ զոյգութիւն ունեցած են եւ տակաւին կը գոյատեւեն տարբեր գաղափարական եւ քաղաքական ուղղութիւններ: Բնական երեւոյթ է քաղաքական տարակարծութիւնը եւ գաղափարական տարբերութիւնը: Սակայն կան երեւոյթներ, որոնց շուրջ տարբեր ուղղութիւններ տարակարծիք չեն կրնար ըլլալ իրարու միջեւ: Եւ առաջին հերթին այս երեւոյթներուն շարքին պէտք է նշել հայութեան համար Հայոց Աշխարհի վերջնական եւ յանձնարարական կապը ըլլալու հասկացողութիւնը:

Այսօր, Հայաստանի անկախութեան վերականգնումէն 12 տարի ետք, հակառակ բոլոր դժուարութիւններուն, երկիրը եւ ժողովուրդը յաջողութեամբ անցան դժուար քննութեան: Տարակարծութիւնը կայ Հայաստանի Հանրապետութեան հզօրացման իմաստով, եւ կասկած չկայ, որ այս աշխատանքին մէջ հիմնական դերակատարութիւն վերապահուած է Հայկական Սփիւռքը: Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները աւելի եւս ամուրթ հիմնու վրայ դնելու անհրաժեշտութիւնը գործարար կերպով ինքզինք կը զգացընէ այսօր՝ աւելի քան որեւէ այլ ժամանակ, հեռու պարագայական խորհրդարանի արժեքներէն եւ համազգային մասնակցութեան միջոցով: Իր անկախութեան վերականգնման 12ամեակը կը յուշէ, որ տակաւին կայ հարց մը, որ կը սպասէ իր ըրաբու լուծման, իւրաքանչիւր հայ կը ձգտի այն օրուան, երբ Հայաստան պիտի դառնայ ամբողջ հայութեան հայրենիք՝ երկրադաբար իր կեանքի օրէնքներն ընդունման միջոցով...

ալ հայրենի ժողովուրդը բազմաթիւ դժուարութիւններ կը դիմագրաւէ: Այս միջոցառումները արժանաւորութիւն կը ծագի արժանաւորութեան լուծումներ առաջադրելու վերոյիշեալ հարցերուն, որովհետեւ նախկին ժամանակաշրջաններէն կուտակուած են բազմաթիւ լուծելի հարցեր:

Յետոյ, յաջորդ հանգըրուանին կենսական կարեւորութիւն կը ստանայ հայ քաղաքական միտքին կողմէ յստակ պատկերացում մը ունենալ հայ-թուրքական յարաբերութիւններուն մասին: Պատշաճութեամբ մը, որ հիմնուած ըլլայ ազգային գաղափարախօսութեան եւ հայկական պահանջատիրութեան հասկացողութիւններուն վրայ, որպէսզի ունենան պաշտօնեայ այլեւս չյանդգնի յակասեցնել անուանէ «տիրահաճոյ» անընդունելի կայտարարութիւնները յատարել, եւ ըսել, որ «ժողովուրդները պէտք է մոռնան անցեալին կատարուած վատ իրադարձութիւնները»:

Անկէ գտաւ, Հայաստանի անկախութեան վերականգնման 12ամեակը կը յուշէ, որ տակաւին կայ հարց մը, որ կը սպասէ իր ըրաբու լուծման, իւրաքանչիւր հայ կը ձգտի այն օրուան, երբ Հայաստան պիտի դառնայ ամբողջ հայութեան հայրենիք՝ երկրադաբար իր կեանքի օրէնքներն ընդունման միջոցով...

12 տարի առաջ իր անկախութիւնը վերականգնած Հայաստանը համայն հայրենիքի նախաձեռնութեան սեւեռակները կը մնայ: Անկախ իւրաքանչիւր հայու վերջնական ապահովման:

ալ հայրենի ժողովուրդը բազմաթիւ դժուարութիւններ կը դիմագրաւէ: Այս միջոցառումները արժանաւորութիւն կը ծագի արժանաւորութեան լուծումներ առաջադրելու վերոյիշեալ հարցերուն, որովհետեւ նախկին ժամանակաշրջաններէն կուտակուած են բազմաթիւ լուծելի հարցեր:

Յետոյ, յաջորդ հանգըրուանին կենսական կարեւորութիւն կը ստանայ հայ քաղաքական միտքին կողմէ յստակ պատկերացում մը ունենալ հայ-թուրքական յարաբերութիւններուն մասին: Պատշաճութեամբ մը, որ հիմնուած ըլլայ ազգային գաղափարախօսութեան եւ հայկական պահանջատիրութեան հասկացողութիւններուն վրայ, որպէսզի ունենան պաշտօնեայ այլեւս չյանդգնի յակասեցնել անուանէ «տիրահաճոյ» անընդունելի կայտարարութիւնները յատարել, եւ ըսել, որ «ժողովուրդները պէտք է մոռնան անցեալին կատարուած վատ իրադարձութիւնները»:

Անկէ գտաւ, Հայաստանի անկախութեան վերականգնման 12ամեակը կը յուշէ, որ տակաւին կայ հարց մը, որ կը սպասէ իր ըրաբու լուծման, իւրաքանչիւր հայ կը ձգտի այն օրուան, երբ Հայաստան պիտի դառնայ ամբողջ հայութեան հայրենիք՝ երկրադաբար իր կեանքի օրէնքներն ընդունման միջոցով...

12 տարի առաջ իր անկախութիւնը վերականգնած Հայաստանը համայն հայրենիքի նախաձեռնութեան սեւեռակները կը մնայ: Անկախ իւրաքանչիւր հայու վերջնական ապահովման:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊԵՆԴԻՄԻ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ Է

ՈՐՄԵ ԱՆՅԵՐԸ ԱՆՈՅՆԱՍՐԵԼԻ ԵՒ ԱՆՆԵՐԵԼԻ Է

12 տարի առաջ, Սեպտեմբեր 21ին, հայրենի մեր ժողովուրդը հանրապետի միջոցով միահամուռ «Այո» ըսաւ անկախութեան վերանուսման: Յաջորդ տարի, Մարտին, Հայաստան պաշտօնապէս անդամակցեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան՝ ՄԱԿԻՆ ու անկէ ետք, Հայաստանի Հանրապետութիւնը տակաւ սկսաւ մուտք գործել ազգերու միջազգային ընտանիքը համախմբող գանձաւ կազմակերպութիւններէ ներս, ինչպէս եւրոպական Խորհուրդ: Վերջինը որուն անդամակցեցաւ հայրենի պետութիւնը Առեւտրի Համաշխարհային Կազմակերպութիւնն էր:

12 տարիներու ընթացքին, Հայաստանի Հանրապետութիւնը նկատուելի ճամբայ կտործ է ինքզինք հաստատելու եւ ամբողջովն ուղղութեամբ: Ճիշդ է, ունինք սահմանադրութիւն ու անոր վրայ հիմնուած պետական կառավարում՝ խորհրդարանով, գործադիր եւ դատական իշխանութիւններով, միջազգային կառոյցներէ թէ՛ այլ երկիրներէ ներս դիւանագիտական ներկայացուցչութիւններ, եւ այլն: Ունինք բանակ եւ ոստիկանութիւն, ինչպէս նաեւ երկրի կեանքը կառավարելու կոչուած համապատասխան հաստատութիւններ ընկերային, առողջապահական, կրթական, տնտեսական եւ այլ սպարէզներու վերաբերող: Աւելի աշխուժացած է կապը հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ՝ անհատական, կազմակերպչական թէ՛ պաշտօնական մակարդակներու վրայ:

Բայց տակաւին բաւական ճամբայ ունինք կտրելիք յատկապէս սահմանադրական բարեփոխումներու ճամբով պետական իշխանութեան օղակներու դերերը աւելի յստակացնելու, ժողովրդավարութիւնը ձեւակցելու անդին գացող խորք ու բովանդակութիւն ունեցող իրականութեան վերածելու, տնտեսութիւնը իր բոլոր ճիւղերով գարգացնելու, երկրի գիտական ներուժը (հաստատութիւններ եւ համապատասխան մարդու) ըստ այնմ ղեկավարելու, ժողովուրդի առօրեայ կարիքները (աշխատանք, կրթութիւն, առողջապահութիւն եւ այլ սպասարկութիւններ) հոգալու կոչուած կառոյցները խորքային առումով բարելաւելու, պետական ամբարկելի եւ ամուրթները եւ ծախսերը ըստ կարելոյն նախատեսելի դարձնելու, բայց մանաւանդ եւ ամեն բանէ առաջ՝ երկրի օրէնսդրական-իրաւական դրութիւնը գերազիշի եւ անվիճելի հեղինակութիւն դարձնելու ուղղութեամբ:

Ցաւաքին է այս վերջին կետը, սակայն պետք է ընդունիլ եւ ըսել, որ Հայաստանի պետութիւնը լուրջ ճամբայ ունի կտրելիք օրէնքի գերիշխանութիւնը եւ անոր հեղինակութիւնը գերիվեր դարձնելու ուղղութեամբ: Որովհետեւ կամայականութիւնը պետական կարգաւորքի եւ բնականաբար նաեւ՝ անկախ պետականութեան ամէնէն լուրջ թշնամի է: Հոն, ուր օրէնքի գերիշխանութիւն չկայ, կ'իշխէ կամայականութիւնը: Իսկ հոն, ուր կամայականութիւնը կ'իշխէ, հոն կը տիրէ քառք: Իսկ քառքի միջոց ընկերացած է... կառոյցներու ճարտարապետութիւնը:

Բնական է, որ Հայաստան, իրբեւ պետութիւն, ունի իր քաղաքական դաշտը, ուր կը գործեն կուսակցութիւններ եւ այլ քաղաքական կազմակերպութիւններ: Կայ իշխանութիւն եւ կայ նաեւ ընդդիմութիւն: Կան իշխանաւոր հոսանքներ եւ կան ընդդիմադիր հոսանքներ, կան իշխանաւոր թերթեր եւ կան ամեն ձեւով իշխանութիւնը քննադատող թերթեր: Սկզբունքային առումով արտադր կամ բնական ոչինչ կայ այս բոլորին մէջ եւ նոյնիսկ բնական պէտք է համարել իշխանութիւն-ընդդիմութիւն պայքարը, մանաւանդ երբ երկրի սահմանադրութիւնը նշուած է այս խղիճ կարգաւորութիւնը: Կարող է կողմերը կը յարգեն խղիճ կանոնները:

Արտադր, անբնականը եւ քաղաքական վնասակար կը կայանայ այն երեւոյթին մէջ, ուր հանգամանակներու շահագործում եւ օրէնքի անտեսում-ըրջանցում տեղի կ'ունենայ պետական կառոյցի որեւէ օղակէ ներս: Այս պարագային, կը տկարանայ պետութիւնը, կը ըրաբայ անոր հեղինակութիւնը թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճակատներու վրայ, եւ իրբեւ երկիր մը կառավարելու կոչուած մարմին՝ կը թերանայ իր պարտաւորութիւններուն մէջ:

Սա կը նշանակէ, որ անկախութիւնը երթալով կրնայ ձեւական բնոյթ կրել ու պարպուիլ իր բովանդակութեանը:

Բոլորիս պարտականութիւն է, իբրեւ պետութիւն եւ պետական կառոյցներ, ժողովուրդ, օրէնսդիր, գործադիր թէ՛ դատական իշխանութիւններ, մամուլ կամ գործարար շրջանակներ, կրօնական, գիտական թէ՛ մշակութային հաստատութիւններ եւ մտաւորականութիւն, կուսակցութիւններ թէ՛ հանրային այլ կազմակերպութիւններ, որ աշխուրջ ըլլանք մեր վերանուսման անկախութեան ոչ միայն վնաս չհասցընելու, այլեւ ամրապնդելու գլուխ: 1918 Մայիս 28ին մեր ժողովուրդի հիմնած անկախ պետականութիւնը եւ 21 Սեպտեմբեր, 1991ին վերանուսման անկախութիւնը լրջագոյն մօտեցում կ'ենթադրեն: Կարմիր գիծ է մեր անկախութիւնը, անոր պէտք է մօտենալ: Ներքին չէ որեւէ ոտնձգութիւն չէ ուղղութեամբ, կամ որեւէ քայլ, որ կրնայ վնասել այդ արժեքին: Այլապէս պատմութիւնը պիտի չենք մեզի:

«ԱՊՐԵՉ»

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐ

Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրություններից յետոյ ձեւաւորուած քաղաքական նոր յարաբերություններում, կառավարութեան ձեւաւորման նոր ձեւերում, Հ. Յ. Դաշնակցութեան կարծիքով, խիստ անհրաժեշտ էր առաւել մեծացնել հրապարակայնութիւնը, հասարակութեան առաջ հաշուետու լինելը:

Համաձայնական յուշագրում եւս մեր առաջարկով ամրագրուեց պարբերական հաշուետուութիւն տալու դրոյթը:

Պատահական չէր նման մտեցումը: Արդէն տարիների աւանդոյթ էր դարձել՝ պետական վարչական կառուցցն աշխատում է իր համար, ներփակուած, առանց իր կառարածի, արածի ու չարածի համար հրապարակայնօրէն հաշուետու լինելու:

Եւ այդ պատասխանատուութիւնը մենք վերցրեցինք նաեւ մեզ վրայ առանձնաբար՝ իբրեւ քաղաքական կուսակցութիւն, համաձայնական կառավարութեան մասնակից կազմակերպութիւն, օրէնսդրել եւ գործադիր մարմիններում ներկայացուցիչներ ունեցող կուսակցութիւն:

